ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 2/5

ութը նոյեմբերի 2012 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ԵԼՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով ԵՊՀ գիտական խորհրդի՝ համալսարանի ֆինանսական մուտքերի և ելքերի ուսումնասիրման և օպտիմալացման ժամանակավոր հանձնաժողովի ներկայացրած զեկույցը, ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հավանություն տալ ժամանակավոր հանձնաժողովի կողմից ներկայացված և ԵՊՀ ֆինանսական մուտքերի և ելքերի օպտիմալացմանը միտված հարցադրումներին և առաջ քաշված սկզբունքներին:
2. Արձանագրել, որ ԵՊՀ ներկա կառուցվածքի և կառավարման եղանակի պայմաններում գրեթե սպառվել են ֆինանսական վիճակի էական բարեփոխման հնարավորությունները: Հիմնախնդիրների համապարփակ և ամբողջական վերլուծության ու առաջարկությունների մշակման նպատակով ստեղծել համապատասխան մասնագետներից կազմված **աուդիտորական** հանձնաժողով, որը պայմանագրային հիմունքներով կմշակի և ԵՊՀ ռեկտորին, ու այնուհետև ԵՊՀ խորհրդի հաստատմանը կներկայացնի ԵՊՀ առաջիկա 3-5 տարիների զարգացման սցենարները՝ ներառելով կառուցվածքային և կանոնակարգային փոփոխությունների համալիր ծրագիր:
3. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և վարչական, ուսումնա-օժանդակ, սպասարկող ծառայությունների աշխատակիցների

հարաբերակցությունը շտկելու նպատակով հրատապ համարել աշխատանքների նկարագրության /անձնագրավորման/ համակարգի ներդնումը՝ մշակելով այդ համակարգի գործառնման ընդհանուր սկզբունքներն ու չափանիշները:

4. ԵՊՀ-ում կոնկրետ մասնագիտություններով ընդունելության թվաքանակը որոշելիս հիմքում դնել մասնագետների պահանջվածության գործոնը՝ ընդունելության պլանավորման հարցը հատուկ քննության առարկա դարձնելով ԵՊՀ գիտական խորհրդում: Միաժամանակ փաստել, որ բարեփոխման կարիք ունեն նաև ԵՊՀ-ում գործող մագիստրոսական ծրագրերը ըստ կազմի, կառուցվածքի և ֆինանսավորման սկզբունքի:
5. Մշակել և ներդնել ուսման վարձավճարների զեղչման նոր համակարգ՝ զեղչերը փոխհատուցելով կրթաթոշակների տրամադրմամբ:
6. Հաշվի առնելով ԵՊՀ աշխատակիցների աշխատավարձերի ցածր լինելը և ԵՊՀ բյուջեի խիստ սահմանափակ հնարավորությունը խնդրին ակնկալվող լուծում տալու համար, ԵՊՀ գիտական խորհուրդը միջնորդում է ԵՊՀ խորհրդին՝ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարությանը ԵՊՀ-ին լրացուցիչ ֆինանսական միջոցներ տրամադրելու խնդրանքով:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ